

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ - Ա

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՄԼԵՏԻ ՇԻՐՈՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ
 ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
 ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սպիտակ համայնքի Ս.Ավետիսյան փողոց, թիվ 1/7 հասցեում գտնվող՝ Հովհաննես Համլետի Շիրոյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0023-0021 կադաստրային ծածկագրով 0,0045 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին կից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Սպիտակ ք. Ս.Ավետիսյան փողոց, թիվ 1/8 հողամաս» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0023-0033 կադաստրային ծածկագրով 0,0041 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 6-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված չափորոշիչներին և որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, հիմք ընդունելով Հովհաննես Համլետի Շիրոյանի դիմումը՝ Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի Ս.Ավետիսյան փողոց, թիվ 1/7 հասցեում գտնվող՝ Հովհաննես Համլետի Շիրոյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0023-0021 կադաստրային ծածկագրով 0,0045 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին կից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Սպիտակ ք. Ս.Ավետիսյան փողոց, թիվ 1/8 հողամաս» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0023-0033 կադաստրային ծածկագրով 0,0041 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով օտարելուն:

2. Հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնի չափով՝ 118 387,50 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 2887,5 ՀՀ դրամ):